



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՆԱԽՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
Խորհրդի 25.07.2025 թ. թիվ 48 որոշմամբ
(Ուժի մեջ է 25.09.2025թ.-ից)

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի կոդ՝ Պ750-01-12
Խմբագրություն՝ 02
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Կանխավճարի ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի:
- 1.2 «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից տրված թիվ 0006 (0009) լիցենզիայի հիման վրա իրականացնում է ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Ֆինանսական վնասների ապահովագրություն» դասի ապահովագրություն՝ սույն Պայմանների հիման վրա կնքելով Կանխավճարի ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր:

ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 2.1. **Ապահովագրող՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ.**
- 2.2. **Ապահովադիր կամ Վարկատու՝** Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր կնքած անձ.
- 2.3. **Շահառու կամ Վարկատու՝** Ապահովագրության պայմանագրում կամ վկայագրում նշված, ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից լիցենզավորված ֆինանսական կազմակերպություն, որն ունի ապահովագրական հատուցում ստանալու առաջնային իրավունք.
- 2.4. **Պայմանագիր՝** ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր.
- 2.5. **Ապահովագրական գումար՝** Ապահովագրողի կողմից իրականացվող ապահովագրական հատուցումների առավելագույն չափ.
- 2.6. **Ապահովագրավճար՝** Պայմանագրով սահմանված չափով և կարգով Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման համար վճարվելիք գումար.
- 2.7. **Ապահովագրական պատահար՝** Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած իրադարձություն, որի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում.
- 2.8. **Կանխավճար՝** հիփոթեքային վարկ տրամադրելիս ձեռք բերվող անշարժ գույքի արժեքի որոշակի տոկոսի չափով կանխավճար, որը պահանջում է ֆինանսական կազմակերպությունը՝ վարկը չմարվելու հետևանքով ֆինանսական կորուստներ կրելու իր հետագա ռիսկերը նվազեցնելու նպատակով.
- 2.9. **ԶԿԳ՝** չվճարված կանխավճարի չափով ապահովագրված գումար.
- 2.10. **Ապահովագրության տարածք՝** Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ.
- 2.11. **Չհատուցվող գումար (ֆրանշիզա)՝** Ապահովադիր մասնակցության չափը վնասի հատուցմանը (վնասի վերականգնմանը), որը սահմանվում է Պայմանագրով՝ կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական.
 - 2.11.1. պայմանական չհատուցվող գումար՝ Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման պատասխանատվությունից, երբ ապահովագրական հատուցման գումարը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, երբ ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է չհատուցվող գումարի չափը.
 - 2.11.2. ոչ պայմանական չհատուցվող գումար՝ Ապահովագրողը չհատուցվող գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

- 3.1. Ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Վարկատուի ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված իր սեփական ռեսուրսներով կամ նպատակային ծրագրերով ֆինանսավորման կամ վերաֆինանսավորման ենթակա բնակելի նշանակության անշարժ գույք (այսուհետ՝ Անշարժ գույք) ձեռք բերելու նպատակով հիփոթեքային վարկավորման ընթացքում ապահովագրական պատահարի ի հայտ գալու հետևանքով Վարկատուի կրած ֆինանսական վնասների հետ:
- 3.2. Սույն Պայմանների համաձայն, վարկավորման տեսակից կախված՝ ապահովագրությունը կարող է իրականացվել 2 (երկու) փաթեթներից որևիցե մեկով:

3.3. Կողմերի համաձայնությամբ կարող են կիրառվել նաև այլ ապահովագրության փաթեթներ:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ՌԻՍԿԵՐ

- 4.1. Ապահովագրական պատահար է համարվում Վարկատուի կողմից Վարկառուին Անշարժ գույքի ձեռքբերման նպատակով տրամադրված վարկի (այսուհետ՝ Վարկ) գծով վերջինիս կողմից վարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Անշարժ գույքի իրացման դեպքում՝ ԶԿԳ-ի ամբողջական կամ մասնակի կորուստը՝ չստացումը Վարկատուի կողմից, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Վարկատուին վճարել ապահովագրական հատուցում Պայմանագրով սահմանված չափով:
- 4.2. Պայմանների 4.1 կետում նշված կորուստ համարվում է այն դեպքը, երբ Վարկառուի կողմից Վարկի մայր գումարի կամ տոկոսագումարի ամբողջ և (կամ) հերթական մասի վճարումը չկատարելու պատճառով Վարկատուի կողմից Անշարժ գույքն իրացվում է՝ դրանով ապահովված պահանջի բավարարման նպատակով, և իրացումից ստացված գումարը բավարար չէ Վարկատուի հանդեպ տվյալ պահին առկա Վարկի մայր գումարի մնացորդի վճարման և (կամ) ԶԿԳ-ի մնացորդի նկատմամբ մինչև երկու տարվա համար հաշվարկված տոկոսագումարների վճարման համար:
- 4.3. Ապահովագրողի՝ Պայմանագրով ստանձնած ապահովագրական ռիսկը դադարում է այն պահից, երբ Վարկառուին մարում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարին համարժեք Վարկի մայր գումարի այն մասը, որը Վարկառուի կողմից պետք է վճարված լիներ՝ որպես կանխավճար (ԶԿԳ):
- 4.4. Ապահովագրողի կողմից Վարկատուին հատուցման ենթակա են միայն ԶԿԳ-ի մնացորդային գումարը:
- 4.5. Եթե Անշարժ գույքի իրացումից ստացված միջոցները բավարար են Վարկի մայր գումարի մնացորդի (Փաթեթ 2-ի դեպքում նաև՝ ԶԿԳ-ի մնացորդի նկատմամբ հաշվարկված մինչև երկու տարվա տոկոսագումարների) վճարման համար, ապա Ապահովագրողի ստանձնած ապահովագրական ռիսկը դադարում է:
- 4.6. Սույն Պայմաններով Ապահովագրողը չի ստանձնում Վարկառուի կողմից վարկային պարտավորության չկատարման ռիսկը:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ 1 – ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ

- 5.1. Ազգային Հիփոթեքային Ընկերության ծրագրով վերաֆինանսավորման ենթակա Վարկ ստանալու համար Վարկատուին դիմած Վարկառուին կանխավճարի տեսքով վճարման ենթակա գումարի մի մասին համարժեք ապահովագրական գումարով Պայմանագիր է ներկայացնում Վարկատուին, իսկ Ապահովագրողը պարտավորվում է ԶԿԳ մասով ապահովագրել Վարկատուի գույքային շահերը՝ ֆինանսական վնասների ապահովագրության դասով:
- 5.2. Պայմանների 5.1 կետում նշված ԶԿԳ-ն առավելագույնը կարող է կազմել Անշարժ գույքի շուկայական արժեքով գնահատված և ձեռք բերման արժեքներից նվազագույնի 20 տոկոսը, որի ներկայացման պարագայում Պայմանների 5.1 կետում նշված նպատակով Վարկատուի կողմից տրամադրվելիք Վարկի չափն առավելագույնը կարող է կազմել Անշարժ գույքի գնահատված և ձեռք բերման արժեքներից նվազագույնի 92.5 տոկոսը:
- 5.3. Վարկառուի կողմից իր վարկային պարտավորությունների չկատարման հետևանքով ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է հատուցել ԶԿԳ-ի կորստի արդյունքում Վարկատուի կրած ֆինանսական վնասը՝ Պայմաններում և Պայմանագրում նշված սահմանաչափով ու կարգով:
- 5.4. Վարկառուի հետ կնքվող Պայմանագրով ապահովագրական գումարը սահմանվում է ԶԿԳ-ի (նվազման դեպքում՝ դրա մնացորդային գումարի) չափով:
- 5.5. Կախված տրամադրված վարկի ժամկետից ու Վարկառուի կողմից վարկի մայր գումարի պարբերական մարումների չափից՝ ապահովագրական գումարը և համապատասխան ապահովագրավճարը յուրաքանչյուր տարի Վարկառուի հետ կնքվող նոր Պայմանագրում նվազեցվում են՝ հիմք ընդունելով Վարկատուի կողմից տրամադրված վարկի մարման ժամանակացույցի և Վարկի ու դրա գծով հաշվեգրված փաստացի մնացորդների վերաբերյալ տեղեկանքը:
- 5.6. Սույն փաթեթի շրջանակներում Չհատուցվող գումար չի կիրառվում:

ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ 2 - ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

- 6.1. «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպության միջոցով «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրով ֆինանսավորման ենթակա Անշարժ գույք ձեռք բերելու նպատակով հիփոթեքային վարկ ստանալու համար Վարկատուին դիմած Վարկառուին կանխավճարի տեսքով վճարման ենթակա գումարի մի մասին համարժեք գումարով Պայմանագիր է ներկայացնում Վարկատուին, իսկ Ապահովագրողը պարտավորվում է ԶԿԳ կորստի մասով ապահովագրել Վարկատուի գույքային շահերը ֆինանսական վնասների ապահովագրության դասով:
- 6.2. Սույն Պայմանների 6.1 կետում նշված ԶԿԳ-ն առավելագույնը կարող է կազմել երկրորդային շուկայից (ոչ անմիջապես կառուցապատողից) ձեռք բերվող Անշարժ գույքի դեպքում՝ դրա արժեքի 30 տոկոսի և Վարկառուի կողմից 10 կամ ավելի տոկոսի չափով կատարված Կանխավճարի տարբերության չափով, իսկ առաջնային շուկայից (անմիջապես կառուցապատողից) ձեռք բերվող Անշարժ գույքի դեպքում՝ դրա արժեքի 20 տոկոսի և Վարկառուի կողմից 7,5 կամ ավելի տոկոսի չափով կատարված Կանխավճարի տարբերության չափով: Ընդ որում, որպես Անշարժ գույքի արժեք՝ հիմք է ընդունվում Անշարժ գույքի շուկայական արժեքով գնահատված և ձեռք բերման արժեքներից նվազագույնը:
- 6.3. Վարկառուի կողմից իր վարկային պարտավորությունների չկատարման հետևանքով ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է հատուցել ԶԿԳ-ի կորստի արդյունքում Վարկատուի կրած ֆինանսական վնասը՝ սույն Պայմաններով և Վարկառուի հետ կնքված Պայմանագրում նշված սահմանաչափով ու կարգով:
- 6.4. Վարկառուի հետ կնքվող Պայմանագրով ապահովագրական գումարը սահմանվում է ԶԿԳ-ի (նվազման դեպքում՝ դրա մնացորդային գումարի) չափով:
- 6.5. Կանխված տրամադրված վարկի ժամկետից ու Վարկառուի կողմից Վարկի մայր գումարի և տոկոսների պարբերական մարումների չափից՝ ապահովագրական գումարը և համապատասխան ապահովագրավճարը յուրաքանչյուր տարի Վարկառուի հետ կնքված նոր Պայմանագրում նվազեցվում են՝ հիմք ընդունելով Վարկատուի կողմից տրամադրված վարկի մարման ժամանակացույցի և Վարկի փաստացի մնացորդի վերաբերյալ տեղեկանքը:
- 6.6. Սույն փաթեթի շրջանակներում չհատուցվող գումար չի կիրառվում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

ԲԱԺԻՆ 7. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 7.1 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ԶԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ և ԵՆԹԱԿԱ ԶԵՆ ՀԱՏՈՒՅՄԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԴԵՊԲԵՐԸ և (ԿԱՍ) ՎՆԱՍՆԵՐԸ, որոնք հետևանք են.
- 7.1.1 Վարկատուի կրած այլ ֆինանսական և (կամ) Վարկի հետ կապված այլ վնասները (կորուստները), այդ թվում՝ հաշվարկված տոկոսագումարները (բառացությամբ՝ Փաթեթ 1-ի դեպքում մինչև երկու տարվա համար հաշվարկված տոկոսագումարների), վարկի չմարման կամ ոչ պատշաճ ձևով մարման հետևանքով առաջացած տույժերը, տուգանքները, պարտադիր վճարները, միջնորդավճարները (կոմիսիոն վճարները) կամ Վարկառուի կողմից այլ ֆինանսական պարտավորությունների կատարումը կամ թերի կատարումը,
- 7.1.2 գրավադրված և կառուցման մեջ գտնվող Անշարժ գույքի բացակայության՝ շինարարությունը չավարտելու կամ կառուցապատողի սնանկացման պատճառով,
- 7.1.3 Պետական մարմինների կարգադրությամբ հիփոթեքի առարկայի առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի կամ այլ նմանատիպ գործողությունների,
- 7.1.4 Հիփոթեքի առարկայի նկատմամբ Վարկառուի սեփականության իրավունքի կորստի,
- 7.1.5 Ապահովադրի (Վարկառուի) և Շահառուի (նրա բաժնետերերի/մասնակիցների, աշխատողների) միջև միտումնավոր ապօրինի համաձայնության/գործողության, Շահառուի ղեկավարների կամ բաժնետերերի/մասնակիցների դիտավորյալ գործողությունների,
- 7.1.6 պատերազմի, կամ պատերազմական գործողությունների (անկախ այն բանից, պատերազմը հայտարարված է, թե՛ ոչ) քաղաքացիական պատերազմի, ապստամբության, հեղափոխության, բողոքի, զանգվածային իրարանցման, ռազմական դրության և նմանատիպ գործողությունների ուղղակի կամ անուղղակի ազդեցության,
- 7.1.7 Վարկառուի կողմից ինքն իրեն մարմնական վնասվածք հասցնելու, Վարկառուի ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի, ինչպես նաև այնպիսի վնասվածքների, որոնք

Վարկառուն ստացել է հակաօրինական վարքագծի արդյունքում, որը հաստատվել է համապատասխան մարմնի որոշմամբ /որոշում, դատարանի վճիռ կամ այլ իրավական ակտ/:

- 7.2 Ապահովագրողի կողմից ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔ է ապահովագրական հատուցում ստանալու համար Վարկատուի կողմից հայցային դիմումը և (կամ) ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տեղեկատվությունը) Պայմաններով սահմանված ժամկետներում չներկայացնելը կամ թերի, ոչ լիարժեք կամ իրականությանը չհամապատասխանող փաստաթղթեր (տեղեկատվություն) ներկայացնելը:

ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ԶՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

- 8.1 Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի ողջ ժամկետի համար ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է ապահովագրության համաձայնեցված պայմանների գծով պարտականությունների ծավալից, Զհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից, Պայմանագրի գործողության ժամկետից և ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:
- 8.2 Ապահովագրավճարը կարող է վճարվել միանվագ (միանգամյա վճարումով) կամ մաս-մաս, կանխիկ կամ փոխանցումով՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:
- 8.3 Եթե Ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական Ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված Ապահովագրավճարի չափը:
- 8.4 Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովագրողը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ Ապահովագրավճարի մուծման տարաժամկետման հնարավորություն:
- 8.5 Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀՐԱԺԱՐՎԵԼ ապահովագրական հատուցում իրականացնելուց, եթե Ապահովագրական ՊԱՏԱՀԱՐԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՊԱՀԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ Ապահովագրավճարի գծով Ապահովագրողի նկատմամբ ՈՒՆԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:
- 8.6 Եթե Ապահովագրողը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել միանվագ կամ հերթական Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ Ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից 5 (հինգ) օր հետո միակողմանի ԼՈՒԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ: Այս դեպքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի համար վճարված Ապահովագրավճարը չի վերադարձվում:

ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԺԱՄԿԵՏ, ԴՐՈՒՑԹՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳ

- 9.1 Վարկառուի ցանկության և Վարկատուի համաձայնության դեպքում Ապահովագրողի և Վարկառուի միջև կնքվում է Պայմանագիր՝ ֆինանսական վնասներից ապահովագրության դասով, որտեղ Շահառու է հանդիսանում Վարկատուն:
- 9.2 Մինչև Պայմանագրի կնքելը Վարկատուն և (կամ) Վարկառուն Ապահովագրողին է տրամադրում բոլոր պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը, որոնց հիման վրա Ապահովագրողը կազմում է Պայմանագիր: Ապահովագրողը պարտավոր է պահպանել Վարկառուի և (կամ) Վարկատուի կողմից իրեն տրամադրված տեղեկատվության և փաստաթղթերի գաղտնիությունը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:
- 9.3 Վարկառուն վարկային պայմանագրի կնքման գործընթացում տալիս է իր գրավոր համաձայնությունն առ այն, որ Վարկատուն, Ապահովագրողի պահանջով, կարող է Ապահովագրողին տրամադրել բանկային գաղտնիք հանդիսացող Վարկառուի Վարկի վերաբերյալ տեղեկատվություն:
- 9.4 Առաջին տարվա համար կնքվող Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Վարկատուի և Վարկառուի հետ կնքվելիք վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը:
- 9.5 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի կողմից Պայմաններով ստանձնած պարտավորությունը կատարելուց հետո հաջորդ տարվա համար Ապահովագրողի և Վարկառուի միջև նոր Պայմանագիր չի կնքվում:

9.6 Ապահովագրության պայմանագիր կարող է կնքվել նաև Ապահովագրողի և Վարկատուի միջև՝ համաձայն վերջիններիս միջև կնքված համագործակցության պայմանագրի և (կամ) Պայմանագրի:

ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1 ՇԱՀԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ.

10.1.1 Ապահովագրողի և Վարկատուի հետ փոխադարձ համաձայնությամբ պահանջել փոփոխել ապահովագրական ռիսկերի, ապահովագրական փաթեթի, ապահովագրական գումարի չափը՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու և, անհրաժեշտության դեպքում, Վարկատուի կողմից լրացուցիչ ապահովագրավճարի վճարման պայմանով,

10.1.2 ստանալ Վարկատուի հետ կնքված Պայմանագրի օրինակը,

10.1.3 մասնակցել հատուցման հետ կապված բոլոր գործընթացներին և Պայմաններով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում:

10.2 ՇԱՀԱՌՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

10.2.1 Ծանոթացնել բոլոր պոտենցիալ վարկառուներին սույն Պայմաններով նախատեսված դրույթներին և Պայմաններին,

10.2.2 Ապահովագրողին տրամադրել ամբողջական տեղեկատվություն ապահովագրական ռիսկի ընդունման, ինչպես նաև ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության (Պայմանների 11.1 և 11.2 կետեր), և դրա տեղի ունենալու դեպքում հնարավոր վնասի չափերի (ապահովագրական ռիսկի) հետ կապված հանգամանքների մասին,

10.2.3 Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Վարկատուի հաշվից Ապահովագրողին փոխանցել ապահովագրավճարը (հերթական ապահովագրավճարը), եթե այլ բան նախատեսված չէ Վարկատուի հետ կնքված պայմանագրով,

10.2.4 Սահմանված ժամկետներում Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրական պատահարի մասին,

10.2.5 պահպանել ապահովագրության գաղտնիքը և Ապահովագրողի հետ հարաբերությունների շրջանակում ձեռք բերված տեղեկությունների գաղտնիությունը,

10.2.6 սեփական պատասխանատվության և իրավասության շրջանակներում կիրառել ապահովագրական ռիսկի մեծացմանը բերող հանգամանքները վերացնելուն ուղղված միջոցներ,

10.2.7 Ապահովագրողի գրավոր պահանջի դեպքում վերջինիս տրամադրել գրավադրված գույքի իրացմանն առնչվող ցանկացած տեղեկատվություն:

10.3 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ.

10.3.1 ստուգել Վարկատուի և Վարկատուի կողմից հաղորդած տեղեկատվության արժանահատվածությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անձամբ հետաքննել ապահովագրական պատահարի հանգամանքները՝ կատարելով անհրաժեշտ հարցումներ: Այս դեպքում Պայմաններով սահմանված ժամկետը 30 (երեսուն) օր ժամկետով կասեցվում է (բացառությամբ քրեական կամ վարչական վարույթի իրականացման, որի դեպքում նշված ժամկետը երկարաձգվում է մինչև վարույթի ավարտը) և վերսկսվում է կասեցման հիմքերը վերանայելու մասին իրեն հայտնի դառնալուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

10.3.2 Վարկատուից պահանջել տեղեկատվություն վերջինիս և Վարկատուի կողմից Պայմանագրի պահանջների և Պայմանների կատարման վերաբերյալ,

10.3.3 մերժել Վարկատուի հետ Պայմանագրի կնքումը կամ միակողմանի լուծել վերջինիս հետ կնքված Պայմանագիրը, եթե Վարկատուն և (կամ) Վարկատուն հաղորդել են իրականությանը չհամապատասխանող, թերի և (կամ) ոչ հավաստի տեղեկություններ կամ սահմանված ժամկետներում չեն վճարել ապահովագրավճարը,

10.3.4 Տեղեկացված լինել գրավադրված Անշարժ գույքի իրացման հետ կապված բոլոր գործընթացների վերաբերյալ, Վարկատուից պահանջել գույքի իրացման հետ առնչվող ցանկացած տեղեկատվություն և վերջինիս հասանելի փաստաթուղթ: Ապահովագրողի կողմից պատվիրված գնահատող կազմակերպության կողմից տրված Անշարժ գույքի արժեքի (շուկայական և լիկվիդացիոն) վերաբերյալ գնահատման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ իր միջոցների հաշվին պահանջել Անշարժ գույքի գնահատման իրականացում այլ անկախ գնահատող կազմակերպության մոտ: Ստացված

գնահատված արժեքների միջև էական (միևնույն արժեքների միջև 20% և ավել տարբերության պարագայում՝ հաշվարկված առավելագույն արժեքից) տարբերությունների արձանագրման դեպքում, կողմերի փոխադարձ համաձայնությամբ, անշարժ գույքի գնահատման պատվիրակումը կարող է իրականացվել երրորդ գնահատող կազմակերպության կողմից, կամ համաձայն ՀՀ օրենսդրության վիճարկվել դատական կարգով:

10.3.5 մերժել կամ նվազեցնել ապահովագրական հատուցման վճարումը՝ համաձայն սույն Պայմանագրով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերի:

10.4 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

10.4.1 ծանոթացնել Ապահովադրին Պայմանագրի հետ և անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում կնքել Ապահովագրության Պայմանագիր՝ տրամադրելով դրա մեկ օրինակը,

10.4.2 Պայմանագրով և Պայմանագրով նախատեսված դեպքերում Շահառուին վճարել ապահովագրական հատուցում,

10.4.3 ապահովել Վարկատուի և Վարկառուի հետ հարաբերությունների շրջանակում ձեռք բերված տեղեկությունների գաղտնիությունը,

10.4.4 Սույն Պայմանագրով իրեն վերապահված իրավունքի շրջանակներում Պայմանագրի լուծման դեպքում այդ մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել Վարկատուին:

10.5 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ԻՐԱՎՈՐԻՆՔ ՈՒՆԻ.

10.5.1 ապահովագրական ռիսկի շարունակական նվազեցման դեպքում պահանջել նվազեցնել ապահովագրավճարը,

10.5.2 դիմել Պայմանագրի պայմանների փոփոխման և (կամ) լրացման համար,

10.5.3 սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը,

10.5.4 ստանալ Պայմանագրի կրկնօրինակը կամ Ապահովագրողի կողմից հաստատված պատճենը՝ բնօրինակը կորցնելու կամ վնասվելու դեպքում:

10.6 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է.

10.6.1 Պայմանագրում սահմանված կարգով և ժամկետներում վճարել ապահովագրավճարը,

10.6.2 Պայմանագիրը կնքել հոգուտ Վարկատուի,

10.6.3 Ապահովագրողին տրամադրել Անշարժ գույքի իրացման հետ կապված և հատուցման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները,

10.6.4 Կատարել սույն Պայմանագրով և Պայմանագրով սահմանված դրույթները և պարտավորությունները,

10.6.5 Վկայագրում կամ Պայմանագրում նշված տվյալների փոփոխության դեպքում այդ մասին 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում հայտնել Ապահովագրողին, իսկ չհայտնելու դեպքում կրել դրա բացասական հետևանքները:

10.6.6 Ապահովագրողը, Ապահովադիրը և Շահառուն կարող են ունենալ Պայմանագրով, Պայմանագրով նախատեսված, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ իրավունքներ և կրել ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ պարտականություններ:

ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ

11.1 Սույն Պայմանագրի 4.1 կետում նշված ապահովագրական պատահարի տարբեր պարունակող իրադարձություն է համարվում վարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում պարտավորության կատարման ուղղությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան գործողությունների իրականացումը, որի արդյունքում գրավադրված Անշարժ գույքը կարող է իրացվել և Ապահովագրողի մոտ կարող է ծագել ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն: Սույն կետի իմաստով ապահովագրական պատահարի տարբեր պարունակող իրադարձությունները դրսևորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացված գործողությունների արդյունքում համապատասխան որոշումների կայացմամբ, մասնավորապես, Վարկատուի կողմից Անշարժ գույքի բռնագանձման (իրացման) վերաբերյալ որոշման կայացումը՝ ի սեփականություն վերցնելու վերաբերյալ կամ հարկադիր կատարման ծառայության կողմից Անշարժ գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու, ուղղակի վաճառքի վերաբերյալ որոշման կայացումը կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավասու մարմինների կողմից Անշարժ գույքի բռնագանձման (իրացման, վաճառքի) վերաբերյալ համապատասխան որոշման կայացումը:

- 11.2 Անշարժ գույքի բռնագանձման (իրացման) մասին համապատասխան որոշումը կայացվելուց հետո ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՅՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏՈՎ ԿԱՄ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՈՎ 7 (ՅՈԹ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂՅԱԿ ՊԱՀԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ, իսկ եթե Անշարժ գույքի իրացումն իրականացվում է դատական կարգով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավասու մարմինների կողմից Անշարժ գույքի բռնագանձման (իրացման, վաճառքի) վերաբերյալ համապատասխան որոշման հիման վրա, ապա ՆՇՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ 7 (ՅՈԹ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՈՐՈՇՄԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ 15 (ՏԱՄՆՀԻՆԳ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼ բռնագանձման (իրացման) գործընթաց սկսելու մասին Վարկատուի կամ հարկադիր կատարման ծառայության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ իրավասու մարմինների կողմից Անշարժ գույքի բռնագանձման (իրացման, վաճառքի) վերաբերյալ համապատասխան որոշումը և պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով)՝ ստորագրված Ապահովագրողի կողմից: Նշված ժամկետները խախտելու դեպքում ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է քաց թողնված ժամկետը հարգելի համարելու համար ներկայացնել հիմնավոր և օբյեկտիվ պատճառներ (ապացույցներ), իսկ ԱՅՐՊԻՄԻՔ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՆԹԱԿԱ Է ՄԵՐԺՄԱՆ:
- 11.3 Անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է, անկախ իրացման եղանակներից, 11.1 և 11.2 կետում նշված ժամկետներում՝ տրամադրել Պայմանների 11.9 կետում նշված փաստաթղթերը (տեղեկատվությունը):
- 11.4 Անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու (իրացնելու) գործընթացը Վարկատուի կողմից պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության, Պայմանների, Պայմանագրի, Անշարժ գույքի գրավի և վարկային պայմանագրի պահանջներին համապատասխան:
- 11.5 Եթե Անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու (իրացնելու) գործընթացն իրականացվել է ՀՀ օրենսդրության, Պայմանների, Պայմանագրի, Անշարժ գույքի գրավի և վարկային պայմանագրի պահանջների խախտմամբ, այդ թվում՝ գործընթացին մասնակից Վարկատուից տարբերվող այլ իրավասու մարմինների կամ անձանց կողմից (ինչը կարող է հաստատվել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտով), որի արդյունքում Վարկատուի նկատմամբ Վարկատուի վարկային պարտավորությունները մնացել են չբավարարված կամ մասնակի բավարարված, ապա ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԸ ԱԶԱՏՎՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ, իսկ եթե Ապահովագրողն արդեն իսկ վճարել է ապահովագրական հատուցումը, ապա ՎԱՐԿԱՏՈՒՆ և ՎԱՐԿԱՌՈՒՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՊԱՐՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐ, ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ամբողջությամբ վերադարձնել Ապահովագրողի կողմից հատուցված ապահովագրական գումարը:
- 11.6 Ապահովագրական փաթեթ 1-ի և Ապահովագրական փաթեթ 2-ի դեպքում Ապահովագրական հատուցում վճարելու համար վնասի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևերով՝

Եթե $I > S$ in, ապա $\bar{C}=0$, հակառակ դեպքում՝ $\bar{C}=S$, որտեղ.

(S in)՝ Վարկի մայր գումարի մնացորդային արժեքն է,

(S)՝ ապահովագրական իրադարձությունը տեղի ունենալու օրվա դրությամբ ՉԿԳ-ի գծով Վարկի մայր գումարի փաստացի մնացորդն է,

(I)՝ գույքի իրացումից ստացված հասույթն է՝ առանց իրացման ծախսերի նվազեցման,

($\bar{C}$)՝ ապահովագրական հատուցման գումարն է:

- 11.7 Անշարժ գույքի իրացման արդյունքում Պայմանների 4.1 կետում նշված պատահարն առաջանալու դեպքում ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է 7 (ՅՈԹ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ Ապահովագրողին ներկայացնել գրավոր դիմում և ապահովագրական հատուցման համար սույն Պայմանների 11.9 կետում նշված փաստաթղթերը, բացառությամբ, այն փաստաթղթերի, որոնք արդեն իսկ ներկայացվել են 11.1 և 11.2 կետերով սահմանված կարգով: Նշված ժամկետի սկիզբը հաշվարկվում է Անշարժ գույքի իրացման ու իրացման արդյունքում գոյացած գումարը բաշխելու պահից: Ապահովագրական հատուցումը վճարվում է Վարկատուի կողմից նշված հաշվին՝ փոխանցումով:

- 11.8 Սույն Պայմաններով նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողն ընդունում է որոշում ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու կամ նվազեցնելու մասին: Համապատասխան որոշումը, այն կայացվելուց հետո հնգօրյա ժամկետում, Ապահովագրողը փոստային ծառայության միջոցով առաքում է Վարկատուին՝ նրա մշտական բնակության հասցեով, և Վարկատուին՝ նրա գործունեության հասցեով:
- 11.9 Ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը կայացնելուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը Վարկատուին միանվագ վճարում է հատուցումը:
- 11.10 Պայմանների 11.1, 11.2 և 11.6 կետերում նշված անհրաժեշտ փաստաթղթերին են վերաբերվում Պայմանագիրը, գրավադրված Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, Անշարժ գույքի սեփականության վկայականը կամ գնման իրավունքի պայմանագիրը, աճուրդի արձանագրության պատճենը, Վարկատուի որոշումները՝ կապված գույքի իրացման հետ, չվճարված Կանխավճարի կամ դրա մասի չափի վերաբերյալ տեղեկանքը, ինչպես նաև Ապահովագրողի պահանջով գույքի իրացման հետ կապված և ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ Վարկատուին հասանելի ցանկացած այլ փաստաթուղթ:
- 11.11 Եթե Վարկատուն խախտում է իր ֆինանսական պարտավորությունները, և ի հայտ է եկել Պայմանների 11.1 և 11.2 կետերում նշված ապահովագրական իրադարձությունը, հետևաբար առկա է ապահովագրական պատահարի նախադրյալներ ունեցող իրավիճակ, ապա Ապահովագրողը, կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ վերաֆինանսավորման ներկայացվելիք կամ վերաֆինանսավորված վարկային փաթեթների դեպքում՝ անկախ կողմերի փոխադարձ համաձայնության, Վարկատուին տրամադրում է ապահովագրական հատուցման կանխավճար՝ $T=S$ գումարի սահմաններում, որը սառեցվում է Վարկատուի կողմից մինչև ապահովագրական պատահարի ի հայտ գալու հանգամանքի հաստատումը: Հետագայում, ապահովագրական հատուցման գործընթացը կարգավորելիս կողմերը կատարում են վերջնահաշվարկ, հաշվի առնելով Վարկատուին տրված հատուցման կանխավճարը:
- 11.12 Եթե Վարկատուին տրված հատուցման կանխավճարի գումարը կազմում է ավելի մեծ գումար, քան հատուցման ենթակա վերջնական գումարը, ապա Վարկատուն պարտավորվում է 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել Ապահովագրողին այդ գումարների տարբերությունը:
- 11.13 Եթե Վարկատուին տրված հատուցման կանխավճարի գումարը կազմում է ավելի փոքր գումար, քան հատուցման ենթակա վերջնական գումարը, ապա Վարկատուին հատուցման ենթակա կլինի այդ գումարների տարբերությունը:
- 11.14 Եթե վարկատուն վարկային պարտավորությունները կատարում է ապահովագրական իրադարձության և ապահովագրական պատահարի միջև ընկած ժամանակահատվածում, և Ապահովագրողը կանխավճարի ապահովագրական հատուցումն արդեն վճարել է Վարկատուին, ապա վերջնահաշվարկը կատարվում է Վարկատուի կողմից Անշարժ գույքի բռնագանձման (իրացման) վերաբերյալ որոշման վերացման օրվան հաջորդող 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

ԲԱԺԻՆ 12. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳ

- 12.1 Ապահովագրության գործողության ժամկետը սահմանվում է Պայմանագրով:
- 12.2 Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է՝
- Ֆիզիկական անձ Ապահովադրի մահվան դեպքում,
 - Ապահովադրի՝ Պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում, սակայն միայն Վարկատուի գրավոր համաձայնությամբ,
 - Ապահովագրողի կողմից Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները կատարվելու, այդ թվում՝ ապահովագրական գումարը սպառվելու դեպքում,
 - Եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահարի վրա հասնելու հավանականությունը վերացել է, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից զատ այլ հանգամանքների բերումով: Այս դեպքում

- Ապահովագրողը Ապահովադիրին հետ է վերադարձնում ապահովագրավճարի մի մասը՝ հաշվարկված համամասնորեն ապահովագրության գործած ժամանակահատվածի համար,
- Ապահովադիր գրավոր դիմումի և Վարկատուի գրավոր համաձայնությամբ, եթե Վարկատուի և Վարկառուի միջև կնքված Վարկային պայմանագրի համաձայն կատարված վարկի գծով մարումների արդյունքում Վարկ/Գրավ հարաբերակցությունը հասել է Վարկատուի կողմից սահմանված հարաբերակցությանը: Այս դեպքում Ապահովադիրին վերադարձման ենթակա է վճարված ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն՝ նվազեցնելով Պայմանագրով նախատեսված ընդհանուր ապահովագրական վճարի 10%-ի չափով՝ որպես գործառնական ծախսեր,
 - ՀՀ օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով, Պայմաններով, Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
- 12.3 Պայմանագիրը կարող է Ապահովագրողի պահանջով միակողմանիորեն վաղաժամկետ լուծվել՝ Ապահովադիր կողմից օրենքով, այլ իրավական ակտերով, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում, որի ժամանակ Ապահովադիրին է վերադարձվում ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, որը հաշվարկվում է Պայմանագրի գործողությունը դադարեցնելու օրվանից:
- 12.4 Ապահովադիրն իրավունք ունի, Վարկատուի գրավոր համաձայնության առկայության դեպքում, միակողմանիորեն վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս, քան 5 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին, եթե այլ ժամկետ նախատեսված չէ Պայմանագրով:
- 12.5 Ապահովադիր կողմից Պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում՝ վերջինիս վերադարձվում է վճարված ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն՝ նվազեցնելով Պայմանագրով նախատեսված ընդհանուր ապահովագրական վճարի 10%-ի չափով՝ որպես գործառնական ծախսեր:
- 12.6 Այն դեպքում, երբ Ապահովադիր կողմից Պայմանագրի վաղաժամկետ լուծման պահանջը պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադիրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:
- 12.7 Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադիրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով, անկախ հատուցման գումարի չափից, դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար կամ ստացել է այն, բացառությամբ այն դեպքի, երբ ապահովագրական հատուցումը մերժվել է, և Ապահովադիրը (Շահառուն) համաձայնվել է Ապահովագրողի կողմից տրամադրված մերժման վերաբերյալ եզրակացության հետ:
- 12.8 Ապահովագրողի լուծարման դեպքում վերջինս պարտավոր է Ապահովադիրին վերադարձնել Պայմանագրի չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը:
- 12.9 Պայմանագրի գործողության դադարումը Կողմերին չի ազատում Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած ապահովագրական պատահարների և ապահովագրական հատուցումների հետ կապված միմյանց հանդեպ ստանձնած պայմանագրային պարտավորություններից:

ԲԱԺԻՆ 13. ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ (ՍՈՒԲՐՈԳԱՅԻՆ)

- 13.1 Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, Ապահովագրողին ապահովագրական հատուցում վճարած, հատուցված գումարի սահմաններում, անցնում է պահանջի իրավունքը, որն ունի Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրության արդյունքում հատուցված վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ:
- 13.2 Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին փոխանցել բոլոր ապացույցները և փաստաթղթերը, գրավոր հայտնել իրեն հայտնի ամբողջ տեղեկատվությունը և իրականացնել Ապահովագրողին անհրաժեշտ բոլոր գործողություններն իրեն փոխանցված իրավունքների իրացման համար, որն ունի Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրության արդյունքում հատուցված վնասի համար պատասխանատու անձի նկատմամբ:
- 13.3 Եթե Ապահովադիրը երրորդ անձանցից հատուցում է ստացել, Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության պայմաններով վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացված

գումարի տարբերությունը: Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին անմիջապես տեղեկացնել այդպիսի գումարների ստացման մասին:

- 13.4 Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը (կամ դրան համապատասխան մասը), եթե պարզվի հանգամանք, որը օրենքով կամ սույն Պայմանագրով ամբողջությամբ կամ մասնակի գրկում է Ապահովադիրին ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից:

ԲԱԺԻՆ 14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 14.1 Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Պայմանագրի Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:
- 14.2 Վեճերի առաջացման դեպքում Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: